



ՏՆՕՐԻՆ-ԽՄՐԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 11

ՀԱՅԲԱԳԻՏԱԿ

10 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԵԳՐՑԵՍՏՈՒՄ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ԶԵՆԹԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԴ ԺԱՄԱՑՈՒՑՆԵՐ

ՄԻԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻԶ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտի-Գարու, Օւուղաթ-Պաք հաստատութեան Գէմ, Թիւ 16

(آ. آصاډوریاں) شرکت صتیبه مطبعه سی — باب عالی حاده - ۵۴ و ۵۵

ՏՊԱԳՈՒԹԻՒՆ Յ. ՍԱՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտի-Պաք հաստատութեան Գէմ 52

Հարոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լիանգամանք մեքենաներ
վր գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅԹԻՑ ԿԱՅՍ. ՓԱՆԱՅԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐ
ՄԱՆՖԱԿԹՈՐԻՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱՆԱԽԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՆՏԱՐ | Զարը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեալ երաժիշտ. որութիւն

Մասնահիշեր գաւառներու քոյր փաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ՔԵՒԵԼՔ ՕՐԱ-

Թերթ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պո-
սոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. դա-
ւառներու համար տարեկան 108 դրշ. վեց-
ամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ
վաճառում՝ քաղք փարա: **ԱՐԵՒԵԼՔ**
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իբ-
ր թերթը ողնորդուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսա-
բաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւ այլն:
Բաց ի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ եւ այլն:

ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագիրն պէտք է ուղղել Տէր և
Տնօրէն Գաբրիէլին էֆ. Պօյաճեանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաս-
տատուած են թերթին տպարանն ու խմ-
բագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԿԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 11

ՇԱՐԱԹ

10 ՆՈՅԵՄԲԵՐ 1907



ՍԵՐ ՍՆԱՅՈՒՆ ԲՐՈՒԿԱԳԻՐԸ ԵՐՈՒԱՆԴ ԹՕՂԱՑԵԱՆ

ԲԱՑՈՒՄ

ԹԱՎՇԱՆՋԵԱՆ ԿՏԱԿԻՆ

Գրեց՝ ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

Երբէք չպիտի հաւատայիք, ինչպէս ամէնէն առաջ ես, — և երկո՛ւրս ալ իրաւունք պիտի ունենայինք, allez! — որ ֆանթեզիսդի մը վիճակէր առաջնութիւնը իր ընթերցողներուն (բաղմամբիւ ... համարելու միջոց չեմ ունեցած) առջիւ բանալու կտակ մը՝ որուն շուրջը ա՛յնչափներ աքաղաղային ... կտկտակներ կ'ըլլան:

Մեզի կը ներեն շատ մը բաներ բանալ, օրինակի համար՝ աղջկան մը սիրտը, հարսի մը սնտուկը կամ քահանայի մը երեսը, կըրնանք բանալ գրական հանդէս մը, փողոցի գուռ մը կամ մեր ... բերանը երբ քֆրել ուզենք, բայց ո՛չ մէկ ատեն պիտի արտօնէին մեզի բանալ Թավշանձեանին կտակը, զոր լուրջ գրողներ իրենց մենաշնորհը կը դաւանին:

Չեմ գիտեր թէ ի՞նչ տարբերութիւն կայ Բասիմի և իմ միջեւ, և ինչո՞ւ անոր բանալ կըցածը, ես չպիտի կրնամ եղեր բանալ:

Ան երկո՞ւ տկանջ ունի, ե՛ս ալ նմանապէս: Ան բանդալո՞ն կը հագնի, կարծեմ ես վարտիքով չեմ պտրտիր ննջասնեակէս դուրս: Ան երկու ոտքով կը քալէ, չեմ կարծեր որ երբէք իմ չորս ոտքով պտրտիլս տեսած ըլլաք: Ան էրիկ մա՛րդ է, հաւատացէք որ ես էրիկ մարդ եմ:

Պիտի ըսէք որ անիկա զոյգ մը ահագին փառաւոր պեխեր ունի, զորս ես չունիմ:

Mais, ça ne compte pas!

Պեխը չէ որ մարդը կը չինէ. Լորտ Սաւրզպրի ալ պեխ չունէր և մեր Պետիկը պեխ ունի, մինչ Հայկանուշ Մառք պեխ չունի:

Ժամանակակիցներս իրենք իրենց մէյ մէկ սահման գծեր են ասոր անոր և չեն կրնար հասկնալ՝ երբ աս ու ան իր սահմանէն դուրս ելլել փորձէ վայրկեան մը օդ առնելու համար:

Ժամանակակիցներս չեն ուզեր հասկնալ որ Յ. Ալփիար կրնայ յուզիչ դամբանական

մը գրել՝ եթէ ուզէ, որուն փոխարէն Յ. Մրմրեան կարող է արտագրելու ամէնէն սրբամիտ ֆանթեզին՝ Սկիւտարի աղջիկներուն բոպիկ ոտքերուն վրայ, ինչո՞ւ Տօմինօ չկարենայ զրականութեան իմաստասիրութիւնը ընել, և ինչո՞ւ Զապէլ Սասյան չփորձէ թուաբանութեան դասագիրք մը հրատարակել:

Ամբողջ վեց ամիս Ֆերիտէ փողոցը բնակելը արգելք մը չէ որ ամառը երթամ Մօնթէ-Դարլօ կամ Պատէն-Պատէն անցնել:

Այսօր բիւաւ կ'ուտեմ, վաղը՝ մաքառօնի, միւս օր ալ փաչա, նմանապէս այսօր կ'երգիծաբանեմ, վաղը կը փրկսփայեմ և միւս օր ամերիգան-խաւսա կը ծախեմ:

— Չէ՛, դուն զաւեշտագիր ես, պէտք է միայն քօհաճ բաներ գրես:

Ինչո՞ւ, perqeb?

Այսօր քօհաճ բան մը ունիմ՝ ան կ'ըսեմ, վաղը լալիք բան մը կ'ունենամ, այդ կը զրուցեմ, միւս օր նիւթերն կը հատնին, այն ատեն ալ գրիչս կը կտորեմ կը նստիմ:

Ժամանակակիցներուս այս յամառութիւնն է որ կեանքը դառնացողացած է մեր աչքին:

— Դուք զաւեշտագիր էք, պէտք է անպատճառ կեանքը զաւեշտական տեսնէք, կը կրկնեն մեզի:

Ու մենք այս բռնութեան ներքեւ՝ կը հարկադրուինք կեանքը խիստ ողբերգական դտնելուն:

Երբեմն լալու փափաքներ կ'ունենամ, բայց հեծեծանքներս կը խղեմ կոկորդիս մէջ:

— Ուշադրութիւն, պզտիկ, դուն երգիծաբան ըլլալու յաւակնութիւնը ունիս, պէտք չէ երբէք լսա:

Երբեմն կը պատահի որ Ալփիար — մե՛ծն Ալփիար, որուն ամէն մէկ տողը ժպիտ է և ամէն մէկ հատուածը՝ պաչիկ մը — վայրկեանական տխուր տպաւորութեան մը ներքեւ — սրտի ցաւ, քսակի երաշտութիւն,

chi lo sa? — մղամազձոտ չեշտ մը դրած
բլլայ իր քրոնիկին մէջ: Eh quoi? homo
sum! ...

Անմիջապէս, ընթերցողը քիթին չի տա-
նիր յօդուածը և մէկ րոպէի մէջ մոռնալով
լուր աշն քրքիլները զսրս պարգեւած է ի-
րեն խեղճ քրոնիկագիրը, մէկգի կը նետէ
թերթը:

— Այս շաբթու Ալփիարը ինկեր է:

Ապերախտութիւն, va!

Թո՛ղ Վահան Փափաղեան այս շաբթու իմ
խաբերս համար փոխանակ իր սովորական
գաւելչտականը գրելու, փորձէ անգամ մը
հանգուցեալ մեծ մայրիկին վրայ սրտառուչ
դամբանական մը գրել, և պիտի տեսնէ որ
գալ շաբթու յիսուն հատ պակաս պիտի ծախ-
ուի իր թերթէն:

Բայց, անցնի՛նք, որովհետեւ այս տեսակ
խօսքերու կատակը անգամ ընդունելի չէ:

Ու, դիտէ՛ք ինչո՛ւ բոլոր այս յառաջա-
բան խորհրդածութիւններս:

Եզրակացնելու համար որ այսօր կեանքիս
մէջ առաջին անգամ՝ ըլլալով լուրջ պիտի
ըլլամ:

Une fois ce n'est pas boutume!

Ու, առաջին անգամ թատերաբեմ ոտք
կոխող սկսնակներու յատուկ սոսկալի tract-ն
կը բռնուիմ այս կեղեւին տակ, որ իմինս չէ
և զոր փոխասած եմ լրջախոհ պաշտօնակից-
ներէս, — ենթադրե՛նք, — Ե. Արմէնէ:

Ահա՛ թէ մարդ՝ փոխ առնուած զգեստի
մը մէջ ո՛րչափ կրնայ հանգիստ ընել:

Գիտեմ որ եթէ այս նիւթը Ե. Արմէնի
ձեռք իյնար, նախ որոտընդոտ « առաջնոր-
դող » մը կ'ընէր, յետոյ թուարանական խըն-
դիւր մը կը հանէր անկէ, աշուհետեւ հանե-
լուկ մը, եւայլն:

Սակայն, մենք փորձենք ինչ որ կրնանք
յիշեցնելով միանգամայն թէ՛ « աշխարհիս է՛ն
աղւոր աղջիկը միմիայն իր ունեցածը կրնայ
տալ », և եթէ տալիք բան մըն ալ չունի,
նորէն դուք չէք վնասեր:

Գա՛նք հիմա խնդրին, որուն նկատմամբ
un traître mot չըսի տակաւին:

* * *

Նիւ-Եորքաքնակ բարեկամ մը, որ Ամե-
րիկա գացած է հոն փողոցները սիւռուած

տողարները հաւաքելու դրական նպատակով,
բայց դեռ ամէն ամիս ծնողքէն մէյմէկ կո-
րիկ գումարներ բերել կուտայ ... ամերիկ-
եան կանոնաւորութեամբ մը, վերջին թրդ-
թաբերով խիստ չափեկան նամակ մը կը շր-
կէ ինծի, — ինչպէս պիտի վկայէք:

« Թալլեանճեանից կտակը բացուեցաւ,
անա՛ մանրամասնութիւններ, » կ'ըսէ բա-
րեկամս:

Չեմ կրնար նամակը նոյնութեամբ հրա-
տարակել, որովհետեւ անձնական է, և անձ-
նական բաները մէջտեղ հանելը ամօթ կ'ըլլայ:

Բայց, մեր Ս. Հայրերէն նուազ զօրաւոր,
չեմ կրնար դիմադրել փորձութեան, և բա-
րեկամիս ներողամտութիւնը հայցելով՝ կը
յանդգնիմ նամակին պարունակութիւնը ձեզի
հաղորդել, հոգ չէ թէ ասով կենցաղագի-
տութեան նախնական կանոններուն դէմ մե-
ղանշած ըլլամ վատօրէն:

Գիտեմ որ ըրածս սրբապղծութիւնս մըն
է, — թող Աստուած և ամերիկայաքնակ
բարեկամս ներեն ինծի:

* * *

Թալլանճեան (Յովհաննէս), գորգավա-
ճառ, յիսուն հազար ոսկիի հարստութիւն մը
ունի եղեր՝ ինչպէս յայտնուեր է իւր կտա-
կէն: Ուրեմն, սխալ էր 80,000 ոսկիի են-
թադրութիւնը:

Իր հարստութեան կէսը կտակելէ վերջ
իր ընտանիքին անդամներուն և մէկ քանի
բարեկամներուն (անուն յիշելու հարկ չկայ՝
չտես պարտագահանջներու աչքը չբանալու
համար), միւս կէսն ալ ամբողջովին նուի-
րեր է լոկ գրական նպատակներու և գրչի
մարդոց:

(Իր հարստութենէն թէեւ կարգ մը կի-
ներու ալ բաժին է հաներ, բայց այս կէտը
չեշտելու պէտք չկայ, որովհետեւ հանգուցեալը
ամուրի մը չէր և ոչ ազատ՝ այն տեսակ ազատ
դաշտեր մշակելու):

Հանգուցեալը — գրասէր անձ, — 2000
ոսկի յատկացուցեր է հայերէնէ չինարէն և
չինարէնէ հայերէն բառգիրքի մը պատրաս-
տութեան համար:

Թալլանճեան ալքոլամոլութեան թշնամի
մըն էր և իր ամբողջ կեանքին ընթացքին
մէջ անոր դէմ մարտնչեցաւ, բայց ամերիկ-

Յան արտասովորութիւնով մը 500 ոսկի կը տակեր է այն մարդուն որ իր մահուընէն մինչեւ տասը տարի վերջը ամէնէն մեծ գինովը պիտի կրնայ ըլլալ:

Հանգուցեալը յիստակար կը նկատէր Յ. Ալփիարի ըրած գրականութիւնը, արդ, այս ընդհանուր յիստին առջըք առնելու համար յանձնարարեր է իր կտակակատարներուն առատօրէն ապահովել մեծանուն հայ ֆանթէզիիստին նիւթականը ցմահ, պայմանաւ որ այսուհետեւ իր գրական տաղանդը գործածէ միմիայն քաղողներ գրելու:

Հինգ հազար ոսկի՝ հաստատելու համար գորգաշինութեան վարժարան մը, ուր հայ աղջիկները գորգ բանիլ պիտի սովորին:

Տասը ոսկի Տիգրան Արփիարի, որպէս զի շատ չմտնէ:

Սիմոնիկ Ալաճաճեանի ամսական հինգ ոսկիի եկամուտ մը, իր հօրը բարի զաւակը եղած ըլլալուն համար:

Հանգուցեալը կտակեր է որ կատարելապէս նորոգել տան Ար. Այվազեանի եէնիգարուի եայլն:

Կտակեր է հինգ ուսանող զրկել եւրոպական համալսարաններ, պայմանաւ որ այս տղաքը հարուստի զաւակներ ըլլան. — հանգուցեալը խորհեր է որ թերեւս այս կերպով աղքատի զաւակները կը զրկեն, կտակարարին փափաքին հակառակած ըլլալու համար միշտ:

Հինգական ոսկի նուէր այն ամէն գրողներու, որոնք իր մահուընէն վերջը պիտի շարունակեն վեց ամիսը անգամ մը յօդուած մը գրել իր մասին: — Հանգուցեալը այս կերպով մտածեր է անմահութեան տաճարին մշտնջենական վարձակալը ըլլալ:

Մէյմէկ ոսկի Ե. Արմէնի ամէն անգամ որ յաջողի կատարելապէս անհասկանալի, բայց քերականօրէն անսխալ հայերէն նախադասութիւն մը շարադրել:

Հանգուցեալը խնդրեր է իր կտակին մէջ Արմենակ էֆ. Խնձէեանէ որ հաճի իր յօդուածներուն ստորագրութեան տակէն իր փաստաբան ըլլալը ծանուցանող փակագիծը ջնջել, նկատելով որ լեզուաբանական յօդուածի ստորագրութիւն մը այցետոմս մը կամ զառդ-s'ausse մը չէ: (Անշուշտ Արմենակ

էֆ. Խնձէեան պիտի ուզէ յարգել հանգուցեալի մը խնդրանքը):

Նոյնպէս հանգուցեալը խնդրեր է Հրանտ էֆ. Ասատուրէ և Սմբատ էֆ. Դաւթեանէ, որ հաճին վերջապէս աւարտել, առաջինը՝ իր Պարոնեանի կեանքը և երկրորդը՝ Հայ դերասաններու ուսումնասիրութիւնը: Երբ այս երկասիրութիւնները աւարտին, հինգ հարիւրական ոսկի նուէր պիտի ստանան:

Խնորային 100 ոսկի, այն օրը ուր պիտի հրատարակէ Ներսիսաւրիէն աւելի անհասկանալի գիրք մը, և Գր. Մալխասին ալ նոյնչափ գումար՝ իր երկրորդ սարսափելի թարգմանութեան համար:

Թաւշանճեան չէ մոռցեր նաեւ Տքդ. Թօփեանը, որ 152 ոսկի պիտի ստանայ, երբ պատրաստէ Գինեմուլութեան իմաստասիրական պատմութիւնը անուն դործ մը:

Խմբագիրներու օգնութեան սնտուկի մը նախաձեռնարկին համար 1000 ոսկի:

Տարեկան հինգ աղքատ հարսնիքներու ծախքը, պայմանաւ որ ծնելիք զաւակները Յովհաննէս կոչուին:

Վերջապէս Թաւշանճեան՝ իր ալանդալութեանը մէջ չափազանց սիրուն կտակով մը աւարտեր է այս շարքը:

Տասը ոսկի այն գրողին, որ տարուան մէջ ապուշագոյն յօդուածը պիտի արտադրէ: Բննիչ մասնախումբն է ...

Միայն խնդիրը հոն է որ ինչպէս կարելի պիտի ըլլայ ... ապուշագոյն յօդուածը ընտրել:

Թերեւս լաւագոյնը կ'ըլլայ ... բոլոր գրողներուն մէկանց մէյմէկ մրցանակ բաժնել տարւոյն վերջը:

Այս կերպով ո՛չ մէկուն սիրտը կը կոտորի:

* * *

Կարծեցիք որ զառանցեցի՝

Ամենեւին:

Պատուո՛յս վրայ կ'երդնում:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԱՂՋԻԿ ԿԱՐԳԵԼՈՒ ԷՆ ԲՈԱԹԻՔ ՄԵԹՈՏԸ

Եկեղեցական տեսութիւններ, առասպել-
լական մասալներ մտիկ ընել և կամ կարդալը
չիտակը ըսելով՝ ամէն մարդու գործը չէ,
իսկ եթէ պատմութիւն մը՝ որուն մէջը կնոջ
և կամ աղջկան մը մատը գտնուի, միայն
գուք չէ՝ սիրելի ընթերցողներս, հապա՛ ձեր
մեծ հայրիկներն ալ և նոյն իսկ ինքզինքնին
չափազանց բարոյամուլ կարծեցնել տուող
կարգ մը լուրջ ? մարդիկ անգամ կարդալէ
աւելի լափել կ'ուզին այդ տեսակ գրութիւն-
ները, սա տարբերութեամբ որ՝ դուք ամե-
նուն ներկայութեանը կը կարդաք, մինչդեռ
անոնք՝ առանձնութեան մէջ միայն :

Երտակը ա'լ անտանելի կը դառնան կոր
այդ տեսակները :

Ես այնպիսիներ կը ճանչնամ որ առաւօտ-
ները եկեղեցի չի հանդիպած, մէկ երկու ծունկ
աղօթք չըրած գործի չեն երթար, իսկ կի-
րակի օրերը եկեղեցւոյ արարողութեանց սկզբը-
նաւորութենէն՝ մինչեւ « երթայք խաղաղու-
թեամբ » ը ներկայ կը գտնուին, և ինքզինք-
նին այնքան անմիջ կը ցուցնեն որ՝ պահ մը
կը մտածես անոնք ալ սուրբի տեղ դնել ու
առջեւին մէյմէկ մոմ տնկելու :

Սակայն եկեղեցիէն դուրս՝ այդ երանելի-
ները հակառակ ամուսնացած ընտանիքի տէր
ըլլալուն, ամուրիի մը չի վայելու աստի-
ճան աղտոտ կեանք մը կանցնեն :

Արդեօք ամուսնութեան համը աղէկ ա-
ռած ըլլալուն համար է : Qui sait :

Տունէն մեկնած ատենին՝ կին մը ունե-
նալին կերեւայ թէ բոլորովին կը մոռնան,
և իրենց դէմը ելլող առհասարակ ամէն կնոջ
անանկ մը կը նային որ՝ իբր թէ քսան տարի
անապատի մը մէջ ապրած ու կնոջ հոտը
երբեք չառած ըլլային :

Կիններն ալ քօհաճ են, կարգուած մար-
դոց ամէն ըրածնուն երբեք չեն խօսիր ու
հաշտ աչօք կը նային անոնց, կերեւայ թէ
այդ գործին փորձառութիւն ունենալուն
համար է, մինչդեռ չեն ներեր որ ամուրի մը
սանկ եան մը նայի և կամ անուշ խօսք մը
ուղղէ իրենց հասցէին :

Ամուսնացած մարդ մը կրնայ օրը քսան
անգամ փողոցէ մը անցնիլ, բայց ամուրի մը՝
Աստուած հեռի ընէ, թող փորձէ երկու օրը
անգամ մը մի և նոյն փողոցին մէջը երեւնալ,
ալ խօսակցութիւննին կսկսի :

— Գա՛ մեղայ, սրվոր նայէ, վրայէն ալ
սըմալն պան մը կ'երեւայ, չափսըն շուներ...

— Գա վորի՛ համար էս...

— Վո՛վ պիտի ըլլայ, Բերուզին բիճը,
քանի օր է տիխաթ կընեմ կոր աս մահալլէն
պուներ կեցեր է, մէյ մը վար մէյ մը վեր,
աչք նալ բէնձիւրէները, ծառքով նալ սէօ-
ղիւմ եապանա պըլըինները կոլորէ կոր...

— Խապահաթը անորը չէ ճանճմ, պոչ կը
խաղցնեն կոր, հէլպէթ տուն ալ ըլլաս նէ՛
պաղնիքդ անուշ է չես ջսեր եա...

— Պօշ լախըտը... էտէպսիդ է չես
ըսեր կոր տէ...

Ու ա'լ կը շարունակեն, ուղածնուն պէս
կառնեն կուտան, առանց քանքալի ըլլալու :

Հա՛, տեսաք նորէն սաբքսի՛ ըրինք,
ասոնք երբեք առնչութիւն չունէին մեր
վերնագրին հետ, է՛յ ի՞նչ ընենք մէյմը ըսած
գտնուեցանք :

Աղջիկ կարգելու համար ի՞նչ միջոցներ
կայ, գիտէ՞ք, Սիրելի Ընթերցողներս, եթէ
ոչ՝ ես ըսեմ, դուք ալ ձանձրոյթը յանձն ա-
ռէք մտիկ ընելու :

Մայրեր կան որոնք՝ սուառենք սարքե-
լուն մէջ կը կարծեն աղջիկնին ամուսնացնել :

Ոմանք՝ գիւղ երթալը գտած են միակ
միջոց աղջիկ ծախելու :

Ուրիշներ՝ քիչ շատ իրենց աղջիկը դար-
գացնելով կարելի եղածին չափ աշխարհիկ
դուարճութիւններէ ու հաւաքոյթներէ հեռու
պահելուն մէջ :

Ասոնք՝ մէկ մէկ ալ երկու կ'ընէի պէս
ամէնուս գիտցած բաներն են, սակայն միջոց
մ'ալ կայ եղեր որ պատմիլէս յետոյ դուք ալ
ինծի պէս մատ պիտի խածնէք խաչո՛ր :

Չավընթեան Մերկեր աղան իր կնոջը ու
մէկ հատիկ աղջկանը՝ հետ չեմ գիտեր որ
գաւառին մէկ անկիւնէն Պոլիս եկեր հաս-
տատուեր էր վաճառականութիւն ընելու հա-
մար :

Մերկեր աղա, Պոլսոյ հրապարակին այն-
չափ տեղեակ չըլլալուն՝ ստիպուած էր տե-

ղացի երիտասարդ մը առնել իրեն քով, որ փոխանակ ամսականաւոր պաշտօնեայ մը ըլլալու՝ շահաբաժին պիտի առնէր իր չօրպաճիէն:

Վահրամ — պաշտօնեային անունը — ինչպէս կ'ըսեն շունչանորդի տղայ մը (գովելու ինչ աղաւոր ձեւ), քիչ ատենէն գործը յաջող վիճակի մը հասցուցած ե Մերկեր աղային աչքին լոյսը դարձած էր:

Շատ անգամ իրիկունները մէկտեղ տուն կ'երթար ու հոն կը գիշերէր:

Մէկ երկու տարուան մէջ յաջողած էր բաւական խնայողութիւն մը ընել՝ որ գործին մէջ կը պահէր:

Մերկեր աղա՝ ամէն գաւառացիներուն պէս Պոլսոյ երիտասարդներուն վրայ մեծ համարում մը չունենալով, կը վախնար որ մի գուցէ օրին մէկը Վահրամ իրմէ հեռանայ ու գործը տակնուվրայ ըլլայ, ուստի միջոց մը կը խորհի, այսինքն՝ աղջիկը տալ անոր կնուխեան, ու ասանկով ընտանեկան կապ մը հաստատել հետը:

Կնոջը կարծիքն ալ կը հարցնէ որ առջի տեսած օրէն ի վեր այդ տեսակ բանի մը փափաքելը կը յայտնէ:

Սակայն միւս կողմանէ Մերկեր աղա չափազանց զրամասէր մարդ, մտածելով թէ այդ տեսակ առաջարկի մը առթիւ չեւայ խոշորկեկ դրամածիտ մը պահանջէ, չի կրնար կերպով մը որոշում տալ:

Վերջապէս, չերկնցնենք օրին մէկը Մերկեր աղա խօսք բանալով.

— Օղուլ, կ'ըսէ, Ստամպոլ եկած օրէս քեզի հետ սըվտեղ կիյնանք կեւլանք կոր, հաթտա քենէ ալ շատ խօշնուդ եմ, հէմ անխտար քի քեզի ալ իմ զաւակս պիտի ընեմ, կը հասկնաս եմ, ինչ ըսել կուզեմ կոր նէ, հա՛, ինչ ունիմ նէ մեռնելէս ետքը աղջկանս է քի՛ քուկինդ ըսել է, նայէ ասանկ թէքլիֆ մը ընելը ամէն մարդու խարճը չէ, էս կուզեմ քի մարդու աղէկութիւն ընեմ...

— Աղէկ ամա կ'ընդմիջէ Վահրամ, հարկաւ այն ատեն մաղաղային ֆիռման պիտի փոխենք...

— Ճանըմ ատունք ետքի գործեր են, հէմ իմ կիտնալիք պաներս էն, ինչո՞ւղ պէտք...

— Էյ կը մտածենք կ'ըսէ Վահրամ, կը-

ռահելով Մերկեր աղային խօսքերուն հետեւ ութիւնները:

Շիտակը ըսելով՝ Մերկեր աղային աղջկին ալ անանկ պէտքիաւանաւրնա սիւնիւմիւ ընելու համար՝ մարդ բաւական զօրաւոր ստամոքս մը ունենալու է:

Ամիսներ կ'անցնին, խօսք չի կայ:

Մերկեր աղա փախիւրին չի ձգեր անգամ մ'ալ առաջարկել ու ինքնիրեն, կեցիւր կ'ըսէ, էս քուկին հաթիթ չի գամ նէ՛ ինծի ալ Մերկեր թող չըսեն, ինչ, իմ գործս ծառքովս հիչ պիտի ընեմ, սըվոր նայէ՛, հէլէ աղջիկս կուտամ կոր տէ՛ մէյ մըն ալ նաղ կ'ընէ կոր, բարա կուզէ, մաղաղային ֆիռման փոխելու կեւլայ կոր, էս անիկա քեզի սանկ բարաւոր թուլսըղ տամ տէ դուն ալ տեսիր, մինք աս օրուան օրս Ստամպոլցիներէն տահա իւշկիւղար ըլլալնիս ամէնն ալ կիտեն թէ՛ ասանկ պղտիկ օյին մը քեզի չեմ կրնար խաղցնել, ու իրիկունը տուն երթալուն՝ կնիկ կ'ըսէ, աս բիճը սոյ է պոններ, սանկ ըսինք չեղաւ, նանկ ըսինք չեղաւ, իլլէ աչկը բարայիս է քի էյօր պօջը կտնուիմ տէ տամ նէ՛ հէմ աղջիկս հէմ ալ բարաներս պիտի առնէ, անկէց ալ մեղի թէքմէ մը՝ լմնցաւ կնաց, անոնք Ստամպոլցի են, մալիւմ ա քիպար եանքէսէճիներ, էմիյէթ չ'ըլլուիր...

— Էյ սօնը, կ'ըսէ կինը, աչքերը խոշոր խոշոր բանալով...

— Սօնը սօնը չի կայ, աղջկանդ թէնպիւնընէ, ասոր մինակ ճարը սա չարթու կառնեմ հետս կը պերեմ, մէկ երկու հատ քիթիւն կուտամ, անկէց կէօյա քունս կուգայ՝ կերթամ կը պառկիմ, դուն ալ մահանա մը կ'ընես՝ օտադ կը քաշուիս, անոնք թող նստին, էյ իշտէ կը հասկնաս եմ, թող աղջիկդ քիչ մը անուշ նայի էքէսը, անոր ալ զաթը կլոխը պոնած՝ կ'ըլլայ գործը, մէյ մը սըրային մըտնայ նէ՛ ալ անկէց ետքը հետը կը տեսնուինք:

— Մեղայ ըսէ Մերկեր աղա, հիչ ատանկ պան կըլլայ զէհէր...

— Ատա՛մ սէնտէ՛, Տէրտէրին կարդալէն ետքը ըլլալուն՝ ատա՛ջ թող ըլլայ, ինչ զարար ունի հէրիք է քի բարաներս ինծի մնայ:

— Էյ ետքը խաղքութիւն կ'ըլլայ նէ...

— Ճանըմ էրկան մ'ըներ, զաթը հիմա մօտա է, օխտը ամսու էղաւ կ'ըսենք կը լմնայ կերթայ...

ՏԸ ... ՏԸ ... ՏԸ ... ՏԸ ...

[ԹԷ ԻՆՉԵՐ ԿԱՆՑՆԻՆ ՅԵՏ ԳԻՒՂԱԴԱՐՁԻՆ]

Շնորհաւոր ցուրտ և բարի ձմեռ :

Այսպէս պէտք է ըսեն ամէն անոնք՝ որոնք մըջիւններու պէս դէմ դիմաց կուգան, ըլլայ փողոցը, ըլլայ տուններու մէջ՝ վիզիքի առթիւ :

Նոյեմբեր մէկէն ի վեր ամէն բան պաղ և ցուրտ երեւոյթ մը առած է գողցես : Պաղ դէմքեր, պաղ կնիկներ, պաղ յողուածներ, պաղուկ ռեֆաւներ, պաղ ընկերութիւններ, պաղ խօսակցութիւններ, վերջապէս ընդհանուր պաղութիւն մը, փոքրիւմ փոքրիւ տիրող ցուրտին հետ :

Այն կտնացի դէմքերը՝ զորս դիտելով մարդ չէր կշտանար, հիմա Տեօնկիի մուշմուշա դարձած են, օրիորդներ՝ որոնք լէմոնի ծաղիկներու պէս ճէրճերմակ, աչքիդ լուսը կը խլէին իրենց հրեշտակային երեւոյթովը, հիմա պաղլուակ խամաճիկներ դարձած են ուսերին վեր, հիւանդանոցէն դուրս ելլալու համար բռաթիֆան առած ցաւաքարներու պէս : Միւսիւններ՝ որոնց պիտերուն ծայրերը ամպերը կը համբուրէին, հիմա օձիկներ վեր կարծես մէկ մէկ կմախքներ են գերեզմաններէն դուրս պոռթկացած :

Վերջապէս օդին պաղութեան հետ ամէն բան պաղած երեւոյթ մը առած է չորս դին, բացի նոր ամուսնացողներէն, որոնք bec à bec զիրար կը տաքցեն իրենց առագաստի սենեակին causeuseին վրայ փռուած կամ ... պառկած, որը որ գործերնուդ կուգայ ըսել :

ՏԸ... տը... տը... տը... , բնութիւնը իր չփացած զաւկին՝ ամառուան մահը կուլայ անդադրում : Անձրեւը կը սեղայ, արեւը խիպէն չուղեր երեւալ ու կը պահուրտի գորշ ամպերուն ետին, ու հովը՝ ընտանի քօթօտի մը պէս կը լիզէ մարդուս ձեռքերն ու դէմքերը : Համմէ : Հիմա նորէն թող ելլան ըսեն թէ « Լիլա, տօլմաի գրականութիւնը կը ժշակէ և քալէ քա թագուհիէն միայն կը հասկնայ ... », զայդպիսեացն իսկ տաղեցի

զեկարագրական ոճովն անագադարու, զի գիտցեն եւ ի միտ անցեն զկարողութիւն ծառայի ձեռ Լիլաի ... (հետեւողութեամբ Յ. Դուրգէնի) :

Ուրեմն դառնալով մեր նպատակին, ձեզի իբր ձմեռնամուտի տիպար յողուած՝ հոս պիտի նկարագրեմ ընտանիքի մը բանավէճը, ընտանիքի մը՝ որ այս տարի եաղլըխ գացած ըլլալով, իրենց պիւտճէն խանգարած, դեռ ոչ փայտ ոչ ածուխ, և ոչ ալ ձմեռուան հագուանին հայթայթած են :

* * *

Գիշեր է : Մեղքոն աղա, բարակ բառաւորսն ուսերուն առած նստած է բաղմոցին անկիւնը : Կինը Ֆուլիկ, երկու թեւերը խաչածեւ կուրծքին վրայ, շալը վրան, ակոսները իրար կը զարնէ, ատեն ատեն թոթուրուելով : Օրիորդ Ուսկուկ, քսան և հինգը շատոնց անցած, կազին լուսով բուրդ թռիֆօ մը շինելով զբաղած է, սենեակին մէջտեղը կըրակարան մը կայ, մէջը երկու կայծով, անոնք ալ մարելու մօտ :

Դուրսը հովը կ'ոռնայ կարծես, և անձրեւը ապակիները կը ծեծէ, մինչ պատուհաններու ձեղքերէն ներս փչող քամին՝ առագաստի պէս կուռեցնէ ճերմակ վարագոյրները :

— Ծանաւա՛ր, ճանաւա՛ր, ... մէկ մարդ մը արունը խմող տիւշմանը պիլէ ըլլա՛յ նէքու ճամբադ չի բռնէր ... , կը տեսնա՛ս կոր քի իլիկնիս տօնմիշ կըլլայ կոր տէ հալէ ինատէդ ճուվալ մը քէօմիւր չես առնէր կոր, կըսէ տիկինը, ունելիով կրակը խառնելով :

— Դրախօմայիս տուկէն մտար վրայէն ելար, ըռզակներս թէմիղը հանեցիր, Չըխաւընի տունին չորս հիսէին մէկն ալ կարդացուցիր, հիմա ալ ասանկ քօթօտի պէս պոչդ պաճախիդ առան առ կծկուէ ... Աստուծմէ գտնաս հէմէն ի՛նչ ըսեմ ...

—

— Ճուղապ չի տա՞ն ... պոյրդ տեսնամ, պերանդ պաց տէ խառչըլըն տուր, սո՛ւտ եմ, ճէսարէթ ունի՞ս նէ պերանդ պաց տէ երկու չիֆթ խառչըլըն տուր, է՛ն ախքատին պուճախը երկու եիւք քէօմիւր կը գըտնուի, մենք իսէ մըծիր պիլէ չունինք քի թառախլամիշ ընենք տէ մասներնիս տաքցունենք ...

— Կընի՛կ, կը տեսնաս կո՛ր ես ինչտար սապըռ կընեմ կոր նէ ... վերջապէս խօսք կառնէ Մեղքոն աղա, որուն համբերութիւնը հատած էր ալ :

— Սապուր չընես տէ ի՞նչ պիտի ըլլայ ... աչկիս մէջը կը նայի՞ս կոր, անանկ քիւլ ետտան կնիկներէն չեմ խելքդ կլոխդ ժողուէ ... հա՛, զէրէ խուռուլմիշ եղած չալար սահաթ դառցեր եմ գիտցած ըլլաս :

— Հիմաճուկ դուն ըսիր լըմնցուցի՛ր ես, սըրան ինծի եկաւ, դուն մտիկ ըրէ. Գանթօճիներուն պէս մար ու աղջիկ կէօպէկ նետեցիք քի եազըլըն երթանք տէյի, չէ մէ ըսինք, է՛ն սօնը ֆայիզով փարայ վերցուցինք ելանք կէօջ ըրինք, հոն տեղը մէկին տեղ չորս խարճեցինք, ան վախտը Մեղքոնը հաճի Պէքիւրին լօբ չէքէրին էր, հայտէ ճուրերը, հայտէ օթուզ պիր, հայտէ պէնտէրը, հայտէ ֆըռլտախ, իրաւ ալ իս ֆըռլտախի պէս դառցուցիք : Ան Զըռչըռին հավուզին կլոխը բաթլիճան տօլմասինը սոթթաւորած լըպպած վախիթնիդ, հիշ միտքերնիդ չինկա՛ւ քի աուր ետեւէն ծուն ձմեռ պիտի գայ, վար պիտի իշնանք, քէօմիւր փատ կուզէ տէյի, հէ՛ ... ձեզի ո՞վ ըսաւ քի Մեղքոնին ալթուն մատենները հինգ հարուր իշճի կը պանին կոր տէյի ... հիմա ալ ասանկ աւուճնիդ պերաններնուդ մօտը պունեցէք հօ ըրէք, տահա քի չի տաքնաք նէ մար ու աղջիկ իրարու ծոց մտէք տաքցէք, ինծի համար հոգ չէ, ես երկու թէք էվէլ նետելուս պէս ալէֆ կելլայ վճուտէս ալէֆ ...

— Խօշ եազըլըն գացի նէ բէմպէզար վուճուտիս միս կապել տալու համար չէ՛ր ես, իշտէ Ուսկուկին խըսմէթին ուղուոն տէտիրկին եղանք ...

— Խըսմէթը սառաֆ Նիքօլիին դարցաւ քի հարուրին իրէք կը բանեցունէ կոր ... հրամանքդ ջուրին կլոխը սառտիւան լպուտած

վախտըդ հէրիֆճի օղուն անդին հէլվա կը կոխէր կոր, խապա՛ր ես ...

— Հիմա է քի ատ լախըռաւըն կընես կոր, գեղն իքէն իրիկունները չիշէն տէվիրմիշ ընեյէդ ետքը ֆուլիկս ֆուլիկս տէյի աշքերդ կը պիւղմէիր տէ, գիտնա՛ ... հայտէ ճահիւլին քովը պերանս բանալ մի՛ տար ...

— Ատ ալ դուք ալըշաւըրմիշ ըրի՛ք ես պիր տիւզ քիթիս ըռախին կուտալիք, ինծի սըզտըրմիշ կընէիք անկէ նա գուլըռգ, որ սահաթէն ետքը աչկս կը բանայի քի օտային մէջը թէքիւրէն պաշխա նէֆէս չիգայ ... կէնէ մուհապէթնիս չաւրուի տէյի երկուք մը կը հազայի անդին կը դառնայի ... սո՛ւտ եմ ...

— Գնացող մարերէն չեմ, խելքդ կլոխդ ժողվէ, եազըլըն երթալու էնանէսին սա աղջիկը տեղաւորցունեմ տէյի էր, գիշերները առջիս կը ձգէի խալապալըն տեղերը կը սըլըքտիւլի քի պէլքի խայըրը մէկը դէմը կելլայ տէյի, աճապ զէֆքիս համար էր ...

— Տը տը տը տը ... մասներս չի բռնեիր կոր տուտո՛ւ ... կռնակս ի վար կիշնայ կոր ... կըսէ օրիորդ Ուսկուկ ուսերը վեր տնկած :

— Զորնամ եալըռւմ, տա լամպան կտոր մը տահա վեր առ, պէլքի ֆառիս կընէ կըսէ տիկին ֆուլիկ ծուռ ծուռ ամուսնոյն նայիլով, ճանապա՛ր ...

Նոյն ատեն դուռը կը զարնուի :

Օր. Ուսկուկ իսկոյն դուռս կը վազէ եկերթայ դուռը բանալ :

— Միւսիւ Օգսէնը ըլլալու է, կ'ըսէ Տիկին ֆուլիկ ե կ'ելլայ կը կայնի :

— Կէնէ ո՛ր զիւպպէն է ... երես մի տաք տա սուլուին ըսի ձեզի, աս կէնէ սըխցուց բէռքաթի վիզիթանները ...

— Սուս ճանըմ. ձգէ քի տաքնան ...

— Էյ քեզի ո՞վ ըսաւ քի եկողը բըռնալ էլլէմէսիէ տէյի ... ինչ կը բանիք կոր քա՛ ...

— Ասոր ալ ես կը խառնուիմ, քու գիտնալիք բանըդ չէ, անձախ սըրային եմ ձըգեր, տուն ի՞նչ քաշեցիր քի, մար մը կը քաշէ մար մը ...

— Լախըռաւըդ ձգէ տէ դուռս ելիր մէյ մը, եկող էլլէմէն խամ է, կելլայ Ուսկուկին կլոխը կը զարնէ ...

— Դուն մի՛ խառնուիր ըսի, աղջիկս

մօր թէրպիտ առած է, ես մալիս կիւղէնմիշ կըլլամ, ըսելով դուրս կ'ելլայ սենեակէն, երբ արդէն միւսիւ Օգսէն ձեռքերը շրփելով ներս կը մտնար:

— Բարի իրիկուն ձեզ...աս ի՞նչ ցուրտ, աս ի՞նչ ցուրտ... բարի իրիկուն Մեղքոն աղա՛...

— Աստուբարին, ըսելով Մեղքոն աղա փետտած հաւու պէս երեսը կը կախէ...

— Էյ բարի եկար տղաս, եանի տուն ալ չըլլաս նէ, տուռերնիս զարնող մը չիգայ... աղէկ քի էկար...

— Սանքի հիշ դուրս ելլալու հա՛վա չէր ամա, հեղաք ֆէսֆէսէ կընէք՝ Օգսէնը ուր մնաց տէյի, անոր համար ելայ եկայ...

— Էյ աղէկ ըրիր միւսիւ Օգսէն, մի՛նք ալ կուկուկին պէս միս մինակ նստեր էինք, Աստուծո՛ւմ մարդ մը կը վնասէինք կոր, կ'ըսէ Տիկինը աչքին պոչովը ամուսնոյն նաշելով, որ մի գուցէ ֆալցօ մը կոխէ անկիւնէն, ինչպէս կընեն գաղանաղուսպները:

— Մինակ բան մը կայ նէ, ան ալ ցուրտն է, խօսք կ'առնէ Օգսէն ձեռքերը շրփելով, ես ալ ըսի որ երթամ Տիկին Յուլիկին, հարկաւ վաւարանը կրակ կտրած է՝ տաքնամ...

— Այո... բայց տասն անգամ սօսածին խապար զրկեցինք օւթան չեղաւ:

— Գոնէ կրակ մը չինէիք, աս ի՞նչ ցուրտ աս ի՞նչ ցուրտ, ըսելով ոտքի կ'ելլայ Օգսէն՝ ցուրտէն չկրնալով նստիլ:

— Հա ամա կլոխնիս կը զարնէ կոր միւսիւ, խօսք կ'առնէ Մեղքոն աղա սիկառը քաշելով...

— Օրիորդ, արգեօք դիմացի կողմը լօտօսուլու սենեակը երթալու ըլլանք, հոն ալ ելի տաք չընէր...

— Կարծեմ թէ այո՛, կուզէք նէ...կ'ըսէ օրիորդը ժպտելով:

— Հապա հապա, հայտէ աղջիկս մէյ մը դիմացի օտան գացէք, պէլքի հոն խույթու է, ըսելով կը թոյլատրէ որպէսզի ճանիւնները ներսի սենեակը առանձնանան:

Անոնք երկուքը դուրս կ'ելլան, մինչ Մեղքոն աղա ոտքի կ'ելլայ:

— Ո՛ւր, նստեր ես նէ նստէ, կէնէ քի՛նչ ուրուր ուրուր կ'ելլաս կոր...

— Դուն սա կազը վառէ տէ հետս քէօմիւրիւկը եկուր, մծիր ֆիլսոն գտնանք տէ կրակ մը չինենք, ղէրէ դիմացի օտային հա՛վան բէք սէրթ է...

— Տէր ողորմեայ, լօտօսուլու է նէ՞...

— Լօտօսուլու է ամա, կըլլայ քի պիրտէն պիրէ խառանելի կը դառցունէ կընիկ, իս հաւատքէ օրէնքէ մի հաներ, նայէ գեղը չենք, ալթըլս պօծողս դառցունեմ պիտի...

— Անխտար պիտի ընես քի, թէքմիլ աս տարուան եաղլըխներնուս մասրափը պօշը պիտի երթայ, անճախ տղան ճալակօղտեցինք ավուճնիս առինք, ելիր բօթ մը կոտրէ տէ ձգէ երթայ, անկէ ետքը սէն սաղ պէն սէլամէթ...

— Քա հավի՛ կլոխ, ճալակօղտածդ ա՛ս է քա... հէրիֆին տունը կած մը չիգայ եղեր, ելեր մեզի է եկեր քի կոնակը տաքնայ տէյի, ֆառղին ես...

— Ան Ուսկուկիս կրակին կալ ուզեր է...

— Դուն ալ Աստուծու կրակին պիտի գաս... երկու գիշեր տահա աս հէրիֆը գայ տէ լօտօսուլու օտան քաշուին նէ, գործը կիւն տօղուսի պիտի փոխուի...

— Դուն մի խառնուիր, աս կնիկճէ գործ է, դուն չե՛ս ըսեր կոր քի փարաներս պօշ տեղը վրայ գնաց տէյի, ես ալ տակէն պիտի ելլամ, դուն ալ սէյիր ըրէ...

— Մէյիր պիտի ընեմ ամա՛, օտային դուռն ալ գոցեցին, բէրտէներն ալ քաշեցին գիտնալս, էյ... ասոր սօնը...

— Դուն քաշուէ, Ուսկուհիցաս ինքզինքը գիտէ, ան մօրը աղջիկն է...

— Քեշկէ ան հօրը աղջիկը ըլլար տէ ես ալ աս տարիքիս մէջը fhoukմեմ չըլլայի, մէյ մը դուրս ելիր քա՛... լօտօսուլու ֆալան ըսելնիքէն չեղան կէմին պաթըրմիշ ընեն...

— Քա ճանը՛մ, ձգէ քի գործը եփեն ճահիւները, ես գիտեմ կոր ըրածս...

— Կը փասնաս կոր, առղըներդ իրար կը զարնես կոր տէ քէօմիւրին վրայ պիլէ չես նայիր կոր, նասըլ կըլլայ կոր տէ անոնց գործին էփելուն խայրէթ կընես կոր, կընիկ քունը աշկէս կը վազէ կոր, կոնակս ի վար ալ կը դողամ կոր, սա գործը սրային դիր տէ երթամ պառկիմ...

— Գնայ պառկէ ճանը՛մ... ես հոս չե՛մ...

չօգ չէ՛յ ... նստելու տէ՛ պէքճի՛ պէս սա-
հաթ պաշի զարնելու չես, հայտէ՛ հայտէ՛
եռողանը կըլիսդ քաշէ տէ պառկէ ...

Նոյն պահուն ներսէն ճղալու ձայներ կը
լսուին:

— Կընիկ ներսը լոտօսը ազմիշ եղաւ,
ինծի կուգայ քի պաթմիշ կըլլան կոր, զէրէ
Ուսկուկին ծաները կառնեմ կոր ...

— Զահիլ չե՛ն մի, շախալաշմիշ կըլլան
կոր ճանրմ, հէրիք էտեւունն իյնաս ...

— Չէ, սանքի հոգ չեմ ըներ ամա, միւ-
սիւ խաբտանը անէմի է, չեղայ խազա մը
հանէ, մենք ձմեռուան քէօմիւրը մտմտալ-
նիքէն, սանտալին խալաֆաթը կըլինիս չեղ-
լայ ...

— Ի՛նչ ըսել կուգես կոր Մելքոն աղա՞...
չօգ չէ՛յ ... բայ ըսէ տէ հասկնամ տէ պեր-
նիդ չափը տամ, նասը՛լ սանտալ, նասը՛լ
խալաֆաթ ... կըսէ տիկինը բարկացած:

— Տիւղճէ՛ն կուգես կոր լախըռտըին,
հա՛, աս հէրիֆին անկաճէն բռնելուս պէս
դուրս պիտի նետեմ, աստեղը տէնկօին ա-
խըռը չէ, Չաչարին պալօղը հիշ, քա ի՛նչ ը-
սել է քի, եապանճի տղայ մը կէս գիշերին
գայ տէ էլին աղջիկը առնէ, լոտօս բօրեազ
պտըտցունէ ... լսուա՞ծ պան է քա, դուն
հիշ խելք չունիս ...

— Ինչո՞ւ եապանճի պիտի ըլլայ, ան կը
տեսնաս վաղը մէկանլօր փեսայ պիտի գայ
փեսայ՛ ... դուն ալ մաթ պիտի ըլլաս ...

Բեզի թախ գեղէն ըսի քի, աս տղուն
չեմ հաւնիր կոր, տուն մի հանտըպցունէր
տէյի, հոն երես տուիր տուիր, հոս ալ ներս
առնել պաշլայեցիր ...

— Ի՛նչ ունի, կիւլ ֆիտանի տղայ, ասկէ
աղէկը պիտի գտնանք ...

— Բէշկէ մէշէ օտունի ըլլար, ձմեռուան
դէմ կուգար, ֆախաթ առ ալ չէ, նանէ
մաճունի հէրիֆ մը, կունակը հազըր լաթ մը,
քիթը կէօլիւկ մը, պըյըլներուն ալ քօզ-
մէթիկ ... իշտէ պու, քա ասոր ինչի՛ն կիւ-
վէնմիշ կըլլաս կոր ...

— Դուն անխտարը գիտես, մէյ մը պօյ
պօսը տիխաթ կնե՛ս կոր, կիրակիները ճու-
րերը կերթայինք նէ, էռսուն տարուան կար-
գած կնիկները պիւլէ աչք կը պաղեցունէին կոր

վրան: Տը... տը... տը... տը... վո՛ւյ ...
կունակս ի վար կիշնայ կոր ...

— Իմին ալ թէփէս ի վար կիշնայ կոր,
հիշ ասանկ խաբու խաբամա գործ ելիւ չէի
տեսէր, քա՛, մախառնան պիւլէ կրակը դար-
նեն նէ խաբախը կտոր մը բայ կը ձգեն քի
թաշմիշ չըլլայ տէյի, դուն իսէ, կիւլիւ պէս
աղջիկդ ճէհէնեմը նետերես տէ դուռը ա-
ռալըիս է մի, սիւրկիւլիւ է մի խապար չու-
նիս ...

— Սնխտար պիտի ընես քի, սօնը սօնը
տղան ֆառլին պիտի երթայ տէ չօրպային
մէջը պաղ ճուր պիտի վաթի ... աճապ ետ-
քը ծառքէս ո՛ւր կազատիս ... հէ՛:

Եւ դեռ պիտի շարունակէին այսպէս կըռ-
ուրտիլ, ներսի դուռը կը բացուի և աղջիկը
սենեակ կուգայ:

— Տուտո՛ւ, միւսիւ Օգսէնը կտորճիկ մը
լիւմօնաթա կուգէ կոր ...

— Չըսի՞ ... լոտօսը անխտար սերթ է
եղէր քի տղուն սիրտը վեր է եկեր, տուր,
տուր, իլիմօնաթան վազցու կըսէ Մելքօն
աղա, բարկութենէն կաս կարմիր կտրած:

— Ատո՛ր ալ խառնուէ՞, քա ճանրմ քե-
ղի ի՛նչ ... չօգ չէ՛յ ... վրաս լէօպէթ կու-
գայ կոր, մարդ, ծանրդ քեզ քաշէ կտոր
մը ...

— Քա կընի՛կ, աղջկանդ էրեսը նայէ,
դուն հոս մանկային տակը տը տը տը տը
կըլլաս կոր, ան իսէ քրտինքներուն մէջն է
մնացէր ...

— Հէլպէ՛թ, խօլայ՛ պան է տղան խան-
տըմիշ ընելը, վախ եաժըրում, աճապ ինչեր
քաշեցիր ... չորնամ ըսելով կելլայ դուրս
լիմօնաթան շինելու համար, և ասդին Մել-
քոն աղա մինակութենէն օգուտ քաղելով՝
ոտքին մատներուն վրայ կոխելով կամաց
կամաց դիմացի սենեակին դրան կը մօտենայ,
ծակէն ներս կը նայի, երբ միւսիւ Օգսէն
ժաքէթը հանած, հայելին դէմ պնխերը կո-
լորէր, ցած ձայնով մըթմըթալով,

— Իշտէ պու ... որուն հոգ, մարը կու-
ղէ կոր, հայրը չուգէր կոր եղէր, խերս եմ
անիծեր թա՛խ, պուտա պէօյլէ պիւր էյլէնճէ
տիր, բիլիճ կիպի գըզ ... տունը բասեանս
բանալուս կուգամ սըտեղը էյլէնմիշ կըլլամ,
հէմէն հիմա տէրտէրին առջին կայիւլու չեմ

եա ... բէօ՛հ ... թառառա պուժ տէռէ,
թառառա պուժ տէռէ (ու կսկսի ցած ձայ-
նով երգել):

— ...
Ու երբ տիկին ֆուլիկ լիմօնաթային հա-
մը նայելով սանդուխներէն վեր կեցար,
Մեկըն աղա գաւաթը ձեռքէն առնելով վեր
կը տնկէ ...

— Քա ճանրմ, միւսիւ ...

— Սո՛ւս, հիմա լոտօսը խառանէլի կը փո-
խեմ հա՛, միւսիւէն առաջ եւ իլիմօնաթայի
պէտքովն ունեցայ ...

— Պարէ անանկ ալ ոտքի ելար անանկ
ալ, ինչիւր տէ վարէն երկու քէտիւր բեր
մանկալը դիր, կը դողամ կոր ...

— Անոր խոլայը կայ, ես ալ քիչ մը ա-
ռաջ կը դողայի կոր, անկաճս սա միւսիւին
դրանը դնելուս պէս երկու թաքքէին մէջը
կրակ կտրեցայ, դուն ալ ինծի պէս ըրէ,
ալէֆ կեցայ ճակատէդ ...

* * *

Բարոյական. — Եթէ երբէք կրնաք հա-
նել:

Կը փափաքինք մեր աղջիկներուն յատուկ
բարձրագոյն դասընթացք մը ունենալ, ա-
ւելի տրամաբանական չէ՞, նախ կարգ մը
հովկուռ մայրերու համար մասնաւոր կրթա-
բան մը հիմնել, որպէս զի մեր խեղճ աղջիկ-
ները ազատին այս կամ այն երիտասարդին
առտնին խաղալիքը ըլլալէ:

ԼԻԼԱ

ԱՍՏԻՃԱՆ

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ՛
Հէրէքէի Կայս. Գործարանին վաճառատան
աւագ պաշտօնեայ՝ Ազն. Սիրուն Էֆ.ի վարձ
իր այնքան բարեւոք ծառայութեանց, Միւ-
թէմայիզի աստիճանը չնորհուած է:

Ջերմապէս կը խնդակցինք Սիրուն Էֆէն-
աիի վիճակած Կայսերական այս բարձր զը-
նահատման առթիւ:

ՍԻՐԱՔԱՆՈՒԹԻՒՆ

(Ի ՊԵՏԱԶԱՐԳԱՅԵԼՈՅ)

Կ'ըսենք թէ սերք սուրբ է եւ անմեղ
Բայց շատ մեղեքու պատճառ է շատ հեղ:

Սիրոյ անմեղը, համբն ու լուռը
Մարդու ցոյց կուտայ միշտ մահուան դուռը:

Երբոր վստահ չես սիրոյ ճեսակին
Ո՛հ ալ խեղք ճես դուն բուքսակին:

Երբ տիրէն է սիրոյ մը պատճառ
Թշուառ է այն սերն, որուն չկայ ճար:

Կ'սենք թէ սիրն է սիրոյ նաւագան
Բայց հոն բնակի շատ անգամ գազան:

Սերք ծով մ'է ուր կայ շատ մը յորձանք
Երբոր նաւարկես կը գտնես փորձանք:

Սերք չը նայիր գիտուն, զգեսին
Որուն որ փակչի կը զարնէ գեսին:

Պէտք է գիտնալ թէ ամեն կեր Սեր չէ
Ինչպէս ամեն փայտ տառոյ /հսկր չէ:

Կեղծ Սերք չունի երբե՛ք գորով գութ
Կը լքէ իսկոյն երբ ալ չունիս կուտ:

Սերք չի նանչնար զգեղ, գեղեցիկ,
Հարուստ կամ աղքատ կամ բարեկեցիկ:

Սերք բոչուն մ'է անմեղ ու բարի
Երբ յարմար սիրս մը գտնէ կը փարի:

Կ'ըսենք թէ Սերք սուրբ է ու վրսեմ
Ով զայն չգիտէր ապուռ մ'է սերսէմ:

Երբ անկեղծ սիրոյ տաւ սիրտը ընծայ
Այն ասէն միայն խայտայ ու ցնծայ:

Երբ փոխադարձ սերն կեղծ ու խաղախ է
Ու կամ կանուխ եղ ժամկոյն պիտ' քաղէ:


Ուստի պէտք է որ միշտ զգուշանաս
Անկեծին միայն սիրս տալու ջանաս:

Գիտցիր որ չըլլար սիրոյ կասակը
Վերջը չես գտնէր անոր յատակը:

Երբոր սիրոյ հետ դրամն ունի գործ
Կը խաւտեմ եղ չընել երբեք փործ:

Կուգե՛ք որ դեռ շատ խօսքեր մեջ բերեմ
Անխոհեմ սերք մարդ կընէ վերեւ:

Մնամ Սկիւսար
ՌՈՄԱՆՈՍ



ԱՄԲԱԿՈՒՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐԸ. — ԱՄԲԱԿՈՒՄԻՆ
ՀՈԳԵՒԱՐԲԸ ԵՒ ԶԱՌԱՆՑԱՆՔՆԵՐԸ. —
ՏՐԱՄԱԳԻԿԱԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆ ԱՄ-
ԲԱԿՈՒՄԻ. — ԱՄԲԱԿՈՒՄԻՆ
ՄԱՀԸ.

Ուր Ամբակում մեր սիրեցեալ
բարեկամին քով ծուկն չոգած
իր օրհնութիւնները առնելու կը
պատահուինք :

Ուր Ամբակում մեր սիրեցեալ
բարեկամը բերանը կը բանայ...
գոցելէ առաջ աչքերը :

Որդեակ իմ կամ որդիս :

Որդեակը որդիի վերածելուս պատճառը՝
դպրոցին մէջ գրաբարէն ... հոտ մնալուդ՝
համար էր, նման ժամացոյցիս, որուն սլաքը՝
տասը վայրկեանս ետ կը մնայ և կամ տասը
վայրկեանս առաջ կը վազէ միշտ :

Որդիս կամ զաւակս :

Ո՛հ, երեսդ կը թթուեցնես՝ երբ քեզի
զաւակս կ'ըսեմ :

Մի՛ վախնար զաւակս, քեզի զաւակս ը-
սելով ... հայրդ չեմ ըլլար :

Այո՛ զաւակս, թերեւս գուն կը վախնաս
որ, ես քու հորդ Բ.րդ տպագրութիւնն եմ...
բարեփոխեալ և ճոխացեալ :

Տղաք կան որ զանազան և զարմանազան
հայրեր կ'ընենան ... չափու և հասակի
վրայ :

Ադ մանկիկները որքան կ'ուրախանան
երբ ամէն հայրիկ տասնոցներ կը տեղացնէ
իրենց գլխուն :

Եւ այդ երկրորդական ու երրորդական
հայրիկներուն տասնոցները, չաքաւաւաճա-
ռին և մանրավաճառին ... ապրուստը կը
ճարեն :

Եւ դուն ասոնք գիտես ու չես ուզեր որ
քեզի զաւակս ըսեմ :

Բազմահայրիկութեան վրայ օրինակ մը
տամ որ ինչպէս կուզես նէ անանկ մեկնէ ...
իմ մեկնելէս ետքը :

Հայր մը տղուն կը հարցնէ .

— Տղաս, մայրիկը կըսէ թէ զիս կը սիրէ :

— Այո՛, կը սպասասխանէ տղան, ամէն
հայրիկներուն համար ատանկ կըսէ :

Հիմակ տղա՛ս, Ամբակումը մեռաւ ըսե-
լով սանձարձակ մի վազէր կանանց ետեւէն,
ետքը կամ դուն անոնց վրայ կ'իյնաս և կամ
անոնք քու վրադ, աղա՛ս :

Ես որքան որ մեռած եմ, իմ կէսս կրնայ
ողջ ըլլալ ... հրաշքով մը :

Ամուսնացիր տղաս ... երբ ամուսնանալէ
ետքը կարող ըլլաս զանազանել թէ՛ դուն
քու կնոջդ հետ ամուսնացա՛ր, չէ թէ՛ կ'իյնդ
քեզի հետ ...

Եւ երկրորդ նորէն կարող ըլլաս զանա-
զանել թէ՛ դուն քու կնոջդ հետ ամուսնա-
ցար չէ թէ՛ երկրորդ մը կնոջդ հետ :

Եւ երբ, ամուսնանալէ ետքը, քու կամ-
քէդ անկախ, Բաբելոնի մը աշտարակին առ-
ջիւ գտնուիս ... առ զմահիծս և երթ ի տուն
քո՝ ...

Սիրելի որդիս :

Նայէ որ զիս անհանգիստ չընես ... դե-
րեզմանիս մէջ :

Եւ որպէս զի միշտ զիս յիշես, ժամա-
ցոյցս քեզի պիտի տամ, ժամացոյցս, որ ինչ-
պէս գիտես՝ տասը վայրկեանս ետ կը մը-
նայ և կամ տասը վայրկեանս առաջ կը վազէ
միշտ :

Ամէն անգամ որ ժամացոյցս գրպանդ
դուրս հանես՝ յիշէ զիս ...

Եւ նայէ որ այս յիշատակարանս ... ետե-
քեզի մը ձեռքը չյանձնես :

Բիշ մը ջուր տուր ...

Երբ գաւաթ մը ջուր առած
մօտը գացիմք, — քեսանք որ Ամ-
բակում աչքերը սեղեակիմք ան-
կիւնը յարած եր եւ հեղեղեալ-
ները կըսէր :

— Այո՛, մօտ ատենէն, մօտ ատենէն .

— Ամբակում, ինչ կըլլաս կոր ...

— Ամէնուն ձեռքը, ամէնուն ձեռքը ...

— Զանքմ ինչ կ'ըլլաս կոր Ամբակում ...

— Ահա՛ կը տեսնեմ որ...
 — Ճանրմ ի՞նչ կը տեսնաս կոր...
 — Կը տեսնեմ որ զրաշարները...
 — Բայց ո՞ր գրաշարները...
 — Բայց կը տեսնեմ որ կը շարեն...
 — Ի՞նչը Ամբակում...
 — Եւ փորձերը կը նային...
 — Ճանրմ որի՞ն փորձերը...
 — Եւ մամուլին տակ կը թաւալի...
 — Ամբակում, ո՞ր մամուլին...
 — Եւ կաղմարարները՝ թեւերնին սոթ-
 տած կ'սպասեն...
 — Սիրելիս, ի՞նչ բանի, չըսե՞ս Ամբա-
 կում...
 — Եւ գրավաճառները, Տեարք՝ Պալենց,
 Դաւթեան, Մարգարեան, Գլըճեան, Էսկի-
 եան, Զարգարեան, Աշճեան, Թորոսեան,
 և... Պապիկեան...
 — Է՛ Է՛ Է՛...
 — Անհամբեր անոր ճամբան կը նային...
 — Ինչի՞ Ամբակում, ըսէ հոգիդ սիրեա,
 — Եւ ընթերցողները կ'երազեն...
 — Ի՞նչը, պիտի ճաթիմ ալ...
 Ինծի կը դառնայ և Ժպտելով,
 — Ձե՞ս գիտեր, կ'րո՞ւ, ԹԵՌԴԻԿԻ ԱՄԷ-
 ՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՑԸ՝ որ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
 մաքուր տպագրութեամբ, մօտ օրէն հրատարակ
 պիտի ելլայ, հազարումէկ անակնկալներով,
 ուրիշ անգամ չսպուած պատկերներով, ակա-
 ճառոր անձնաւորութիւններու յօդուածներով,
 եւ...
 Այս ըսաւ, գաւաթ մը ջուրը խմեց և
 անդին դարձաւ...
 Ժամացոյցը եօթը հնչեց...
 Ամբակում սարսուռաց...
 — Ամբակում, կ'ըսեմ...
 Զայն չկայ...
 Անեակը խորհրդաւոր լռութեան մը մէջ
 թաղուած է...
 Զեռքս ձեռքին վրայ կը դնեմ...
 Ո՛հ, ձեռքերը սառեւրու պէս...
 Մեռած չըլլայ...
 Այո՛... մեռեր է...:

Մ Ա Շ

Ա Մ Բ Ա Կ Ո Ւ Մ Ի

(Ծնեալ՝ Ամբակում)

Յետ կարճատեւ... մտատանջութենէ մը,
 երէկ գիշեր իր հոգին աւանդեց... աւանդ-
 ձգելով իր մարմինը և ի սուգ համակելով իր
 ամենասիրեցեալ բարեկամը, որ այժմ...
 դամբանականը կը պատրաստէ... ըստ բաղ-
 ձանաց Ամբակումի:

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը
 պիտի կատարուի յաջորդ շաբթուան «Հան-
 րագիրտակ» ի այս էջերուն մէջ... եթէ տեղ
 ըլլայ, և հաւանական է որ թաղումն ալ
 հոս ընենք, իր ընթերցողները հանդիսատես
 ընելու համար այս... եղական թաղումին:
 Կը խնդրուի ծաղկեփունջ չղրկել:

Ինչու որ...

Արդէն զրկուած է հետեւեալներէն.

Պ. Պալենց զրկած է իր Փնջակը, Ս.
 Դաւթեան իր Փունջը (Բ. տիպ) և Փնջակը,
 Սիմօն Գաբամաճեան իր Փնջիկը, Սիմօն Ֆէ-
 լէկեան գերեզմանէն զրկած է իր ծաղկե-
 փունջը, Սիմօն Ալաճաճեան զրկած է Փունջ
 մը, Յովհաննէս Էսկիեան՝ Ոսկեփնջակը, Օր.
 Վերգինէ Գալճեան Փունջ մը...

Իսկ Վ. Մարգարեան, (գրավաճառ... ի
 Մէրճան), հաճելի նօթ մը դնելու համար այս
 փունջերուն մէջ, իր Մարգարիտներէն սրտի
 մը չինելով զրկած է՝ Ամբակումին ի յարգանս:

Priez pour lui

Որ թարգմանի

Ազօթեցէք իրեն համար:

ԱՆՄԵՌՈՒԿ

SOIRÉE D' HIVER

Ստացանք մեր սրամիտ Աշխատակից Ե.
 Թօլաեանի կրտսեր եղբոր՝ Գ. Թօլաեանի
 գեղեցիկ մէկ ձայնագիր վալսը՝ Soirée d'hi-
 ver, որ կոչումն ունի այս տարուան սալօն-
 ներուն cloux ըլլալ՝ իր անուշ և գեղեցիկ
 ներդաշնակութեամբ:

Կը ծախուի բոլոր նուազի գործիքներ
 ծախողներու վաճառատունը:

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

— Եւ ես ալ այնպէս վստահ եմ, ըսաւ Արսէն Լիւբէն տեղէն ելլալով, որ պէտք է աճապարեմ եւ նահանջի կարգադրութիւնս ներս ընեմ:

— Աճապարեցէ՛ք, յարեց Վիլսօն, վայրկեան մը մի՛ կորսնցնէք:

— Ո՛չ իսկ վայրկեան մը Պ Վիլսօն: Ժամանակը ձեզի պիտի յայտնէ թէ՛ որքան երջանիկ եմ այս հանդիպումէն, եւ որքան ուրախ՝ ձեզի պէս թանկագին պաշտօնակից մը ունենալուս համար:

Այսպէս վերջ գտաւ այս տեսակցութիւնը: Սիրալիր իրար ողջունեցին: Արսէն Լիւբէն թեւ սեղմեց եւ երկուքնիս դուրս ելանք:

Բայց հազիւ թէ դուրս ելած, Լիւբէն մէկ ստուամով ցատքեց դնաց դէպի շօտէն:

Երկու հոգի կեցած էին հոն: Վայրկեան մը անոնց հետ խօսակցեցաւ եւ յետոյ նորէն մօտս եկաւ:

— Ներողութիւն կը խնդրեմ, ըսաւ, սա սաղայել Շօլմը բուրդ մանել պիտի տայ ինծի՝ ցտեսութիւն, Վիլսօն իրաւունք ունի, վայրկեան մը կորսնցնելու չէ:

Եւ արագապէս հեռացաւ:

Նոյն պահուն, Հէրլօք Շօլմս ժամացոյցը կը հանէր եւ ոտքի կ'ելլար իր կարգին:

— Ինչին քսան կայ, ժամը իննին պէտք է կամը եւ կոմսուհին գտնեմ կայարանը, ուրեմն ճամբայ ելանք: Վիլսօն, ինչո՞ւ Լիւբէն այդ ճաշարանին մէջ էր, ի՞նչ է քու կարծիքդ:

— Ուտելու համար:

— Վիլսօն, բաւական ատեն է որ հետդ կ'աշխատիմ եւ կը նշմարեմ որ բաւական կը յառաջդիմես կոր. ուտելու համար, թող ատանկ ըլլայ, բայց շատ հաւանականաբար ապահովելու համար թէ՛ ուղղակի Կրօզօն պիտի երթամ, ինչպէ՞ս Կանիմարտ ծանուց: Հիմակ դուն բարեկամս, սա՛ փողոցէն փո-

փոխակի քանի մը կառք նստելով կ'երթաս եւ մեր սնտուկները առնելով սրարչաւ Էլիզէ-Բալաս պանդոկը կը հասնիս, կը պառկիս եւ կ'սպասես իմ հրահանգներուս:

Վիլսօն, հպարտ այն կարեւոր դերին համար որ պիտի կատարէր, մեկնեցաւ:

Հէրլօք Շօլմս, տոմսակ առնելով, ա՛ Ս. միէնի ճեպնթացը նստաւ, ուր Կրօզօնի կոմսըն ու կոմսուհին տեղաւորուեցին արդէն: Բարեւեց զանոնք, երկրորդ ծխափող մը վառեց, եւ վակոնին նըրանցքին մէջ ըսկըսաւ հանդարտօրէն ծխել:

Շոգեկառքը ճամբայ ելաւ: Հազիւ տառ վայրկեան եղած էր երբ կոմսուհին քովը նստաւ եւ ըսաւ.

— Մատանին քովերնիդ է Տիկին.

— Այո,

— Հաճեցէք ինծի տալ:

Կոմսուհին մատանին տուաւ. Հէրլօք Շօլմս առաւ եւ քննեց:

— Ի՛նչ որ կը մտածէի, ըսաւ, աղամանդը փոխուած է:

— Ինչպէ՞ս, բայց իմ աղամանդս ճըշմարիտ է ըսաւ կոմսուհին:

— Ձերը՞, այո՛, բայց ասիկայ ձերը չէ որ...

— Իմս ո՞ւր է հապա:

— Արսէն Լիւբէնի ձեռքին մէջ:

— Հապա ասիկա՞յ:

— Ասիկայ փոխանորդած է ձերինին եւ Պ. Պլէյնէնի չիշէն մէջ մտցուած, ուրկէ երեւան ելաւ:

— Կեղծ է այս ուրեմն:

— Բացարձակապէս կեղծ:

Կոմսուհին շփոթած ականջ կուտար, մինչ ամուսինը, թերահաւատ, մատանին ձեռքին մէջ կը դարձնէր ու կը դարձնէր՝ աղամանդին ամէն կողմերը դիտելով:

Կոմսը կակաղեց.

— Թերեւս կարելի է, բայց ինչո՞ւ ուղղակի չգողցան զայն և յետոյ ինչպէս փոխեցին:

— Ահա ինչ որ պիտի ջանամ լուսաբանել:

— Կրօզօնի դղեակին մէջ:

— Ո՛չ, Գրէյլէն կուգամ և Բարիզ կը վերադառամ, հոն է որ Արսէն Լիւրէնի և իմ միջեւ կատակերգութիւնը պիտի խաղցուի, բայց հիմայ Լիւրէն, պէտք է որ զիս ճամբորդութեան մէջ կարծէ:

— Սակա՛յն...

— Անհոգ եղէք Տիկին, էականը ձեր աղամանդն է, անանկ չէ՞, է՛՛ լաւ, հանդարտ եղէք, Հէրլօք Շօլմսի խօսքս վկայ որ ձեզի պիտի վերադարձնեմ:

Շոգեկառքը կը կամացնար: Շէրլօք կեղծ աղամանդով մատանին գրպանը դրաւ և առանց նայելու որ կերթար, վակոնին դուռը բացաւ: Կոմսը պոռաց:

— Բայց հակագիծին վրայ կ'իջնէք:

Շոգեկառքին պաշտօնեան բողոքեց: Անդլիացին վար իջաւ և մօտակայ կայարանը գնաց, յիսուն վայրկեան ետքը, շոգեկառք մը կը նետուէր և որ զայն Բարիզ կը բերէր կէս գիշերէն առաջ:

Կառք մը նստաւ:

— Կառապան Գլաբէյրօն փողոց, ըսաւ:

Կառքը 23 թիւին առջեւ կեցուց, դիակեց այդ թիւը կրող տունը, նոյնպէս փոստաբան Պ. Տէթինանի տունը. իր քայլերովը չափեց բաւական միջոցներ և թուանշաններով ու գիրերով արձանագրեց յուշատետրին մէջ: Յետոյ նորէն կառք նստելով:

— Կառապան, Հանրի Մարթէն ծառուղին, ըսաւ:

Ծառուղիին և Բօմբի փողոցին անկիւնը հասեր էր, ճամբեց կառքը: Մինչեւ 134 թիւը գնաց և սկսաւ միեւնոյն գնալութիւնները ընել Պ. տ'Օթուայի բնակարանին առաջքը:

Ծառուղիին ամայի և չափ մութ էր, չորս կառքի վրայ շարուած ծառերով, որոնց մէջէն տեղ տեղ կազի մը կտուցը կ'երեւար: Անոնցմէ մէկը տօգոյն լոյս մը կը պլպլար պարապ բնակարանին մէկ մասին վրայ և Շօլմս, տեսաւ « ծախու » աղդադիրը՝ վանդակորմէն կախուած:

— Եթէ կարենամ մտնել, և տալ առաջին այցելութիւնս, ըսաւ ինքնիրեն:

Վանդակորմին բարձրութիւնը, Անգլիացի լրտեսին ներս մտնելու համար մազլոյն մի փորձերը անկարելի ըրին, այն ատեն զբոսական էր կը քարակաւ լամբար մը հանեց և համաբանայի (թալօան) մը՝ որ զրպանէն պակաս չէր ըլլար: Բայց մնծ եղաւ դարմանքը, երբ տեսաւ վանդակորմին դռանը բաց ըլլալը:

Ներս մտաւ՝ դուռը բաց ձգելով:

Հազիւ երեք քայլ առաւ, երբ տանը երկրորդ յարկի պատուհաններէն լոյս մը տեսաւ որ կ'անցնէր:

Լոյսը նորէն անցաւ երկրորդ և երրորդ պատուհաններէն ու տեսաւ մարդաստուեր մը՝ որուն շուրջ պատերուն վրայ կ'երեւար, և որ երկար ատեն թափառեցաւ սենեակէ սենեակ:

— Ո՞ր սատանան կրնայ պատիւ առաւան մօտ, սա՛ տունին մէջ՝ ուր պարոն տ'Օթուան սպաննուած է, ըսաւ Շէրլօք խիստ հետաքրքրուած:

Միակ միջոց մը կար ասիկայ հասկնալու, ինքը ներս մտնելու էր:

Զվարանեցաւ:

Բայց այն պահուն որ կ'անցնէր կազին արձակած լոյսին մէջէն՝ տանը վերնագետի թը ելնելու համար, մարդը ստիկայ նշմարած ըլլալու էր, քանի որ լոյսը մարեցաւ յանկարծ և Հէրլօք Շօլմս անգամ մ'ալ չը տեսաւ ստուերը:

Կամաց մը վերնագետի թին դուռը հրեց, Բաց էր: Առանց աղմուկ հանելու մտաւ մութին մէջ. տանդուխին բազրիքին հանդիպեցաւ և առաջին յարկը ելաւ: Եւ միշտ միեւնոյն լուութիւնը, միեւնոյն խաւարը:

Մանդուխին գլուխը հտանելուն, սենեակ մը մտաւ և պատուհանին մօտեցաւ որ գիշերուան լուսնի լոյսը կը ձերմկէր:

Այն ատեն դուռը մարդ մը նշմարեց, որ անկասկած ուրիշ սանդուխէ մը իջած ուրիշ դուռնէ մը դուրս ելած էր. դէպի աջ կը սարգէր, թփիկներու երկայնքը՝ որ երկու պարտէզներ զատող պատը կ'եզերէին:

— Վա՛յ սոսկալի, աղաղակեց Շօլմս, պիտի փախի՝ ինձմէ:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ Ա.ՃԱՌ.Ա.ՏՈՒՆ.

ՀԱՆՊԵՐՁԵԱՐԻ ԶԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Հարամ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւոր անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գինիս յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիւք եւ գինացկուն փոքրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
ւորակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—14



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեւալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Ջինասսանէ, Հնդկաստանէ, Ճաւայէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Քուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ԶԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՍՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 շրշ.	Վեցամսեայ	25 շրշ.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասահման	»	»	6 Ֆր.
	12 շրշ.		

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՊԱՆԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապր-Ալի հասսէսի Աստուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:
Դրամները պէտք է զրկուին կամ Թամ. Մանտաբութով եւ կամ բութայի փութով 20 հաւա-
20 զրուշի հաշուով:

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ս ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊՍՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմաանասակ դոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաեւ անուններու սկզբնատառով դոհարադարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ վառ ոսկեւեղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամայս վերարկուներ, բուրդէ և մետաքսէ չրջագգեցտի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խառա, ամերիգան, պամա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) եայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բազմիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն:

Վաճառատունս իր տեսակին մէջ մլակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքաց առկունութիւնը, նորութիւնը և ամանութիւնը:

ՍՍԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսակէս վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—50

ՎԱՐՉՈՒ Է